

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- 1. Անունը, ազգանունը**  
Հարություն Սարգսյան
- 2. Զբաղեցրած պաշտոնը**  
ՀՀ Վայոց ձորի մարզպետ
- 3. Գործուղման վայրը և ժամկետները**  
Զինաստանի ժողովրդական Հանրապետություն, 2-13 նոյեմբերի, 2016թ.
- 4. Հրավիրող կողմը**  
ԶԺՀ կոմունիստական կուսակցություն
- 5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**  
ԶԺՀ իշխող կոմունիստական կուսակցության և ՀՀ իշխող Հանրապետական կուսակցության միջև համագործակցության ընդլայնում և խորացում, օրենսդիր և գործադիր մարիմիների ներկայացուցիչների հանդիպումներ և այլ հանդիպումների արդյունքում համագործակցության հաստատում, այցելություն Զինաստանի նահանգներ, ծանոթություն մարզերի զարգացման ուղղությունների և ծրագրի հետ, մարզային մակարդակում համագործակցության հաստատում:
- 6. Քննարկված թեմաները**  
Հանդիպումների ընթացքում կողմերը միմյանց ներկայացրել են երկու կուսակցություններում տեղի ունեցող զարգացումները, առաջիկա ծրագրերը և համագործակցության ակնկալիքները, երկու երկրների ներքաղաքական և արտաքին քաղաքական զարգացումները, դրանց ազդեցությունը երկու երկրների փոխհամագործակցության վրա, այն գերակայությունները, որոնց շրջանակներում կառուցվելու են երկկողմ, և բազմակողմ հարաբերությունները՝ տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Անդրադարձ է կատարվել երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններին, դրանց ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին, ինչպես նաև երկու կուսակցությունների միջև համագործակցության նոր փուլ սկսելու հարցերին: Քննարկվել են Հայաստանի և Զինաստանի միջև մարզային և քաղաքային մակարդակներում համագործակցության հաստատման և ընդլայնման հեռանկարները:
- 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**  
Այցի ընթացքում ՀՀԿ պատվիրակությունը եղել է Պեկին, Նանկին քաղաքներում, Անհոյ մարզում և հանդիպումներ է ունեցել ԶԺՀ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղափարական բաժնի, արտաքին կապերի բարձրաստիճան պաշտոնյաների, Նանկին

քաղաքի ղեկավարության, Անհոյ նահանգի ղեկավարության, այդ նահանգի մի շարք քաղաքների ղեկավարների հետ: Մասնավորապես, Անհոյ նահանգում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվել են ՀՀ Վայոց ձորի և Անհոյի նահանգի, ինչպես նաև երկու մարզերի քաղաքների միջև համագործակցության ծրագրերի մշակման և երկու երկրների կուսակցություններին ու կառավարություններին նշված ծրագրերի ներկայացման հետ կապված հարցեր:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,**

**պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Մարզային հանդիպումների ընթացքում որոշում է կայացվել երկու երկրների կուսակցությունների ղեկավարությանը և կառավարությանը ներկայացնել առաջարկություններ ՀՀ Վայոց ձորի մարզի և ՉԺՀ Անհոյ նահանգի միջև համագործակցության ծրագրեր, հատկապես տուրիզմի, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, ՀՀ Վայոց ձորի մարզի և Անհոյի նահանգի մեկ կամ երկու քաղաքներ հռչակել քույր քաղաքներ և հաստատել համագործակցություն քաղաքային մակարդակում:

**9. Գործուղվողը**

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյան

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

15.11.2016թ.